**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**Ն Ա Խ Ա Ր Ա Ր**
МИНИСТЕРСТВО ФИНАНСОВ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
**М И Н И С Т Р**
MINISTRY OF FINANCE OF THE REPUBLIC OF ARMENIA
**M I N I S T E R**

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
0010, Ереван, ул. Мелик-Адамяна 1
1 Melik-Adamyan str., Yerevan, 0010
Հեռ./Тел./Phone (+374 10) 59 53 04
Ֆաքս/Факс/Fax (+374 10) 52 42 82
Էլ. փոստ/Эл. почта/E-mail: minfin@minfin.am
Web page: www.minfin.am

20.11.12 №1/6.2-4/15121-12

Ձեր № ____________

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
պրն. ՏԱՐՈՆ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մարգարյան

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության վարչապետի ս.թ. նոյեմբերի 14-ի թիվ 02/23.12/16429-12 հանձնարարականի, կից Ձեզ ենք ներկայացնում «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունը:

Առդիր՝ 1 թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՎԱՉԵ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Կատ.՝ Տուրքերի եւ այլ պարտ. վճարների գծով քաղաք. եւ վարչարարության մեթոդ. բաժին
Հեռ. 595 338

529206

12/55884 21.11.12 թ.

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

Նախագծով նախատեսվում է ֆիզիկական անձանց պատկանող փոխադրամիջոցների օտարման դեպքում գույքահարկի օտարման օրվա դրությամբ չմարված հարկային պարտավորությունների անցում նոր սեփականատիրոջը:

Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված տեղեկատվության (ս.թ. նոյեմբերի 9-ի թիվ 01/7-50845 գրություն) համաձայն՝ փոխադրամիջոցների գույքահարկի մասով ապառքների գծով Երևանի համայնքը 2008-2012 թվականների ընթացքում ունեցել է շուրջ 300 մլն. դրամի վնաս:

Հաշվի առնելով, որ նախագծի նպատակն է կարգավորել փոխադրամիջոցների օտարման ժամանակ չմարված հարկային պարտավորությունների հետագա հաշվառումը, նախագծի ընդունմամբ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում տեղի կունենա եկամուտների ճշգրտում, ապառքների կրճատում և հետևաբար նաև եկամուտների ավելացում:

Միաժամանակ, վերոնշյալ նախագծի ընդունումը Հայաստանի Հանրապետության պետական և տեղական բյուջեների ծախսերի վրա կունենա չեզոք ազդեցություն: